

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՆԵՐՈՎԹԷՒ ՎՐԴ. ՍԱՄՐՈՒԷԼԵԱՆԻ

Բանտարկութեան միջոցին ինծի յաճախակի գ'այցելէր իմ հեռաւոր ազգականներէն մահեսի Ստեփան էֆ. Արաւանեան, իսկ Նիւթապէս կ'օգնէր Քերոմբէ էֆ. Կիւլպէնկեան:

Բանտէն ազատուելով, մէկ շաբթուան չափ մնացի իզմիր, Այս միջոցներուն իզմիր, Գարաթագի կողմերը առանձնութեամբ կը բնակէր Պարոն Տ. Սաւալանեանց (երբեմն քարաուղար, աւազցիլ և խմբագիր Վիտնի յերուսաղէմ): Քանիցս այցելեցի իրեն և երկարօրէն տեսակցեցանք հետը Երուսաղէմի անցեալին և ներկային վրայ, Նաև տեսակցեցայ Հայր Յակոբ Վրդ. Քոստանի հետ:

Մեծ Պահքի առաջին օրերուն, Աւստրիական շոգենաւ մը նստելով ճամբայ ելայ դէպի Պոլիս, ուր հասայ երկու օրէն և զանազան քննութիւններու և խաղարկութիւններու ենթարկուելէ յետոյ՝ երեկոյեան գէմ հազիւ թէ կրցայ ազատիլ և ցամաք ելայ:

Այս միջոցներուն յաճախակի կ'այցելէի Վանդուսէի-էֆքեարձի հիմադիր-տնօրէն Կարապետ Է. Փ. Նոսեանին, որ մասամբ անդամայոյծ վիճակի մէջ կը բնակէր Ի Շիշլի իր քրոջ հետ միտսին և օգնութեան կարօտ: Եւ իբր շարաթաթերթ անկնտն կերպով կը հրատարակուէր իր Վանդուսէի թերթը: Յաճախ կը խօսակցէինք իր հետ ազգային հին ու նոր անցքերու և դարձնաւ քննարկ մասին... Իր համոզումը առ էր թէ՝ քանի որ Սւրբապայէն որեւէ օգուտ մը չենք կրնար ապաստիլ, ընդհակառակն, Եւրոպական պետութիւններէն ոմանք (Ռուսիա և Գերմանիա) Հայերու գէմ քաղաքականութեան կը հետեին, մեզի կը մնայ Սուլթան Համիտին և Օսմանեան կառավարութեան հետ վարպետութեամբ, խոհեմութեամբ, զգուշութեամբ և հեռատեսութեամբ վարուիլ և կոտորուած ժողովուրդին մնացեալ բեկորները ուղատել և ապահովել... Մասնաւորապէս շատ կը մեղադրէր իզմիրեան Սրբազանը իր հետեւած քաղաքականութեան և վարուելակերպին համար:

Անդորր ծովագնացութեամբ մը հանդիպեցանք Միտիլլի, իզմիր, Սադրգ. Ռոտոս և Կիպրոս, և հինգ օրէն հասանք Պէյրուսթ, ուր մնացի մէկ երկու օր: Տեղւոյն մեր վանուց տեսուչն էր Տ. Մարթէոս Վրդ. Գայրգեան: Այդ միջոցին ուղեցի այցելել Չմմառու վանքը, և ջրօրի վրայ նստած՝ սկսայ կամաց կամաց բարձրանալ դէպի վանք: Այդ օրերուն տակնին շինուած էր Պէյրուսթի ժողով երկաթուղին, իսկ դէպի Լիբանանու բարձունքը կառուցին գետ նոր կը շինուէր:

Ապրիլ 8, Դշ. օրը Աւստրիական շոգենաւ մը նստելով, ճամբայ ելայ դէպի Եմֆա: Մեր շոգենաւը Հայֆա հանդիպեցու, ուր Երուսաղէմի Յրանչիսկեան կրօնաւորներու ընդհանուր Տեսուչը, մի քանի կրօնաւորներով, ժողով նաւ: Դշ. առաւօտ Եմֆա հասանք: Յրանչիսկեաններու վանքին մեծ նաւակը եկաւ, ուր միւս վարդապետներու հետ ես ալ մտայ և ուղղակի ցամաք ելանք: Ի պատիւ Տեսչին, միւս վարդապետներէն և ինձէլ անցագիր չհարցուցին Եմֆայի նաւամատոյցը: Յրանչիսկեաններու վանքը գնացինք, ուր անմիջապէս նախաճաշ արինք մեզի: Քիչ յետոյ մեր վանքը գնացի, ուր Տեսուչն էր Տ. Գրիգորիոս Վրդ., իսկ Ժամբարձ՝ Տ. Մկրտիչ Վրդ.:

Նոյն օրը Եմֆա հասաւ Զնգուչի վանքին վանահայր Տ. Մինաս Մ. Վրդ. Ամրիկեան, զոր կոտորածներու ժամանակ բռնի խալամացուցած էին և հազիւ քանի մը ամիս առաջ կրցած էր վերադառնալ քրիստոնէութեան:

Ապրիլ 10ին, Տ. Մինաս Վրդ. ի և ուխտաւորաց հետ շոգեկառք նստելով, ժամը 11ի միջոցին ողջամբ հասանք Երուսաղէմի կայարանը:

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

«ՄՏՔԻ ԶՕՐԱՇԱՐԺ»

Հեղինակ՝ ԳԵՂԱՄ - ԳԵՂԱԿ

Լուս ԱճճԷԼԻՍ, 1980, էջ 187

Երկար ատեն է վեր ծրագրած էինք գրել վաստակառատ այս հեղինակի մասին, որ տասնամեակներ շարունակ ՀՅ. լիվուսէն արտագրած իր ցափառութենքով և երազատեսի անդամունքներով ուղղեց գրական մեր հրապարակը (իր ստորագրութեան հանդիպեցանք 1929ին լոյս տեսած «Մշակի» ու վարձքը» հատարին մէջ, ձօնուած՝ Դուրեան Գաթարիարքի Յորեկանին), և որուն անունը, գաղափարաց զուգորդութեամբ, մեր մաքին կը բերէ անունը ուրիշ բախտազուրկի մը, Արսէն Երկաթ, որ կէս դարու երկայնքին տողեր ճարտարապետեց Նեղոսի ափերուն, առանց իր անունը փրկող կտոր մը կտակելու հայ բանաստեղծութեան:

Հատորը լեցնող 163 քերթուածները, ալեւոր գրողէն թուղթին ինչո՞ւ 7 տարիներու կարճ միջոցի մը մէջ (իւրաքանչիւր կտորի տակ պառկած թուականէն կը տեղեկանանք թէ մէկ օրուան ընթացքի՝ մէկէ աւելի քերթուած ստորագրած է երբեմն), կը տարուբերին երկու ծայրայեղութիւններու — որոնց միջին ճամբէն կ'անցնէ իրաւ բանաստեղծութիւնը — մի-

ջև, տարածուելով հասարակ խօսքի սահմանէն մինչև մաքին համար գծուարար մորս ու անհիթի խոհերով ծանրաբեռն կտորները:

Ի գեա վերջին շրջանին սփռուքի այլազան կեդրոններէն կիւլպէնկեան Մատենադարան հոսող հաստ ու բարակ քերթողագրութեան, կը մղուինք խորհելու տարբեր ժողովուրդներու արդի բանաստեղծութեան մասին, կապած յայտնելով — նկատի առած թուական համեմատութիւնը — թէ անոնց մօտ արտագրուածին քանակը կրնայ հաւասարիլ մերինին, ու նաև կասկած՝ թէ օտարներու հրապարակին վրայ այնքան բարձր է թիւը խակ ու ստերի քերթուածների ծոցուորած հատորներու: Այս մարդին մէջ ալ պիտի ուզէինք քաջառուիլ ուրիշներէն:

Անտանիքի եւ մասնաւորաբար իրենց խոհերը արեւելահայ կաղապարի մէջ ձևել փորձող գրիչները. սիրամարգի փետուրներով իր գորշութիւնը ծածկել փորձող ազուաւին առակը յիշեցնող:

Այս ընդհանուր խօսքերէն հաք, վերագրաւորով խնդրոյ առարկայ գրքին, պէտք է ըսել թէ ունի կտորներ, ուր կարելի է հանդիպիլ մտածումի ծուէններու և զգացումի փշրանքներու: Սակայն ծուէնը և փշրանքը չեն կրնար մեզ տա շնորոգել արուեստի բարձունքներու և կը մնանք կէս ճամբան, ուրկէ շատ աւելի հեշտ է վար իյնալ քան բարձրանալ:

Բանանք, պատահաբար, 49րդ էջը և կարգանք: —

Իմ 10 ամառան բացակայութեան միջոցին, Յունաց Տ. Երասիմոս Պատրիարքը և Ասորոց Տ. Գէորգ Եպս.ը վախճանած էին, իսկ Տ. Մատթէոս Նախկին Պատրիարք իգժիրլեան և Ներսէս Մ. Վ. Կարախանեան աքսորուած էին Երուսաղէմ:

Տնօրէն Ժողովի անդամներն էին. —

Երեմիա Արքեպս. Սահակեան,
Սահակ Եպս. Խապայեան,
Ներսէս Եպս. Գէորգեան,
Աստուածատուր Եպս. Յովհաննէսեան,
Անդրէաս Եպս. Միրզայեան,
Մամբրէ Եպս. Մարկոսեան և
Ղևոնդ Վրդ. Մագաուսեան:

Եւ շրջան մը Բեթղէնէմ մնացի և անկէ հաք վերագարծայ Ս. Աթու:

Գրի առնուած 1913 Մարտ 21/3 Ապրիլ (Տրապիզոն)